| | |
|---|---|
| 124r լուսանցքում սոսնձուած երկու չհամարակալուած թերթ, վերջին էջը՝ դատարկ | *ի լրացումն 124r-ի տեքստի՝*<br>- Եւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ էր ի Կեօնտէր կոստանդնուպօլսեցի ոսկերիչ ոմն հայ երիտասարդ Ստէփան անուն, յոյժ զօրեղ եւ ունէր բազուկ քաջութեան: ...<br>- ... Ահա այս է վախճան զչափ անձին ո՛չ ճանաչողաց եւ յիմար ամբարհաւաճ գոռոզացելոց, յորոց փրկեսցէ զմեզ Փրկիչն ամենայնի. ամէն: |
| 125v-126r (242-243) արանքում 1 թերթ | *էջի առաջին եւ դէպի ներս ծալուող կողմում՝ Եթովպիայի թագուհու կնքադրոշմը, թուղթը ծալուելուց յետոյ այն վերացուել է եւս մէկ հայելատիպ պատկերի:* |
| 126r-134v | ԳԼՈՒԽ ԺԷ. Յաղագս գնալոյ Թովմաճանին ի Ծիտտէէն ի Հնդիկս ի Սուրէթ եւ անտի մինչեւ ի Մատրաս հասանիլն եւ անդէն արարեալ գործողութիւնքն: |
| 128r | 127v *վերջին նախադասութիւնը (*Եւ ի մէջ Սուրէթու ի շրջիլն ընդ պարոն Գրիգորին յաւուր միում*) ձեռքով ջնջուած է հեղինակի կողմից, իսկ յաջորդ էջի շարունակութիւնը սոսնձուած է թղթով: Զգուշօրէն բացուած թղթի տակ թաքցուել է հետեւեալ հատուածը.*<br>- ասէ ցԹովմաճանն. Ես տարայց զքեզ ի կրպակ ինչ եւ զծաղրական իրսն կռապաշտից ցուցից քեզ: Եւ գնացին ի կրպակն յայն, յորում նստեալ կայր յաղթանդամ մերկ ոմն յիսնամեայ: Եւ այնորիկ կանայք, որք ո՛չ ծնանէին զաւակս, եկեալ ի կրպակն անդ, արձակեն զձեռս իւրեանց յանդամն այն մերկ մարդոյ, ապա նոյն ձեռօքն շփշփեն զպորտս իւրեանց առ ի յղանալ զզաւակս: Եւ այս մերկ մարդն ամենեւին ո՛չ շարժի եւ ո՛չ խօսի, այլ նստեալ կայ անմռունչ իբր զյիմար վասն այնց կանանց, որս աւուրս ի շաբաթու ժամս երիս միայն եկեալ նստի: |
| 135r-140r | ԳԼՈՒԽ ԺԸ. Յաղագս Թովմաճանին ի Մատրասէն ի Նեկէրաթան գնալոյն վասն Ծիւքրի Յովհաննէսին տուեալ մէրճան սանդրանենին եւ դարձն վերստին ի Մատրաս եւ վասն ի յԵւրոպ գնալոյ եւ ի նաւ մտանելն: |
| 140r-143r | ԳԼՈՒԽ ԺԹ. Յաղագս չուելոյ Թովմաճանին ’ի Մատրասէ ’ի Մուրիս կղզին եւ յելանելն ’ի նա- |